ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԱՐՑԱԽԵԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (փախստականների եւ տեղահանուած անձանց խոցելի խմբերի օրինակով)[1]

ԷԼԻՆԱ ՄԽԻԹԱՐԵԱՆ
mkhitaryan.elina.m@gmail.com

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Իւրաքանչիւր հասարակութեան պատմական բախտը այնպէս է դասաւորւում, որ նրա համեմատաբար բարօրութեան ժամանակաշրջանը եւ ճգնաժամի՝ աղէտի ժամանակաշրջանն անընդհատ փոխարինում են միմեանց: Ինչ-որ մի ժամանակահատուածում հասարակութիւնը վայելում է խաղաղութիւնը, բարգաւաճումը եւ ակնյայտ աղէտների բացակայութիւնը: Հասարակութեան կեանքի այլ ժամանակահատուածը մթագնւում է աղէտներով, որոնք առանձին կամ բոլորը միասին թափւում են նրա վրայ եւ աւերում նրա նախկին բարօրութիւնը[2]:

Մարդկային ցեղի վրայ ազդող բազմաթիւ եւ տարբեր վտանգներից չորս ամենակործանարարն ու քայքայիչն են պատերազմը, յեղափոխութիւնը/քաղաքացիական ներքին զինեալ խռովութիւնները, սովն ու համաճարակը: Այս չորս իրադարձութիւնները ազդում են հասարակութեան մտքի եւ վարքի, ընկերային կառուցուածքի եւ մշակութային կեանքի վրայ: Հասարակութեան պատմական ճանապարհի իւրաքանչիւր բարօրութեան եւ մթագնման հանգրուանի տեւողութիւնը տարբեր է: Ազգային տեսլական ունեցող հասարակութիւնները խաղաղ ժամանակն օգտագործում են պետական հիմնարկների կառուցման, մշակութային արժէքների արարման, զէնքի եւ սննդի պաշարի կուտակման, ինքնաբուժման, ժողովրդագրական ցուցանիշերի բարելաւման, ընդհանրապէս թռիչքային աճի ու ինքնազարգացման համար. դրանք բարձրացնում են տուեալ հասարակութեան դիմադրողականութիւնը, տոկունութիւնը՝ աղէտների ժամանակ ֆիզիքական ու հոգեկան գոյաբանական խնդիրները յաղթահարելու համար:

Հայ հասարակութիւնը իր պատմական ճանապարհին բազմաթիւ անգամներ է անցել «համեմատական» բարօրութիւն-աղէտ այս հերթափոխով:

---

[1] ***Ծ.խ.***- Այս տեղեկագիր-հաղորդումը խմբագրութիւնս ստացաւ Յուլիս 30, 2023ին: Հետեւաբար, անոր տուեալները կ'արտացոլեն մինչեւ այդ թուականին պաշարեալ Արցախի ընկերատնտեսական ու առողջաբանական կարգ մը երեսակներ:

[2] Pitirim A. Sorokin, *Man and Society Calamity*, Greenwood Press, Publishers, NY, 1968, էջ 17:

Վերջին տարիներում, Արցախի խնդրով հայ հասարակութիւնը մտել է աղէտի ժամանակաշրջան՝ դրան նախորդող խաղաղ ժամանակաշրջանը բաւարար չօգտագործած արհաւիրքներին ու ճգնաժամին դիմակայելու հետեւանքով:

ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԸ (ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐ, ՏԵՂԱՀԱՆՈՒԱԾ ԱՆՁԻՆՔ) ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

Պատմական դէպքերի յաջորդականութեանն անդրադառնալուց զատ, պէտք է յատուկ ուշադրութիւն դարձնել վերոյիշեալ իրադարձութիւնների՝ հասարակութեան տարբեր խմբերի վրայ ունեցած տարաբնոյթ ազդեցութեան: Աղէտի ազդեցութիւնն այս կամ այն անհատի եւ խմբի վրայ իրականում միօրինակ չի, ընդհակառակը՝ քանի որ անհատներն ու խմբերը տարբերւում են միմեանցից թէ՛ կենսաբանական, թէ՛ ընկերահոգեբանական առումներով: Սա շատ նման է միեւնոյն հիւանդութեամբ տառապող երկու տարբեր անձանց դիմադրական համակարգի հակազդեցութեան, ինչը կարող է կախուած լինել նաեւ անձի տագնապայնութիւնից, դիմադրողականութեան աստիճանից, հոգեցնցումներից, տոկունութիւնից եւն.: Տրամաբանութիւնը նոյնն է հասարակութեան առանձին խմբերի պարագայում:

Այստեղ քննութեան ենք առել արցախեան հասարակութեան խոցելի խմբերից փախստականներին եւ տեղահանուած անձանց արձագանգը աղէտներին:

Հակիրճ բնութագրենք այս երկու խմբերին՝ փախստականներին եւ տեղահանուած անձանց, հասկանալու համար նրանց տարբերութիւնը: 1951ի «Փախստականների մասին» Ժընեւեան համագումարը եւ 1967ի Արձանագրութիւնը սահմանում են փախստականին որպէս «անձ, ով չի կարող կամ չի ցանկանում վերադառնալ իր ծագման երկիր՝ ցեղային, կրօնական, ազգային պատկանելութեան, որոշակի ընկերային խմբի անդամակցութեան կամ քաղաքական կարծիքի պատճառով հետապնդուելու հիմնաւոր վախի պատճառով»[3]: Եթէ առաւել պարզ ասենք՝ փախստականները այն մարդիկ են, ովքեր փախել են պատերազմից, բռնութիւնից, հակամարտութիւններից կամ հալածանքներից եւ հատել են միջազգային սահմանը: Նրանք այլ երկրում ապահովութիւն գտնելու համար հատում են միջազգային, միջպետական սահմանները եւ ունեն ՄԱԿի ու նրա յատուկ կառոյցների՝ իրաւական ամրագրուած պաշտպանութեան երաշխիքներ: Արցախում փախստականներ են ճանաչւում 1988-92ին Ադրբեջանի ցեղասպան եւ ազգային խտրական քաղաքականութեան պատճառով բնակութիւնը լքած հայերը, որոնցից 30,000ը ապաստան են գտել Արցախում:

[3] 1951 Convention and the Protocol relating to the status of refugees. The UN Refugee Agency (UNHCR), https://www.unhcr.org/3b66c2aa10 :

«Ներքին տեղահանուած անձինք (ՆՏԱ) են համարւում այն մարդիկ կամ մարդկանց այն խմբերը, որոնց ստիպել կամ հարկադրել են թողնել կամ լքել իրենց տները կամ սովորական բնակութեան վայրերը, մասնատրապէս ռազմական հակամարտութեան հետեւանքով կամ դրանցից խուսափելու պատճառով, բռնութեան համատարած դրսեւորումների, մարդու իրաւունքների խախտումների, տարերային կամ մարդու գործունէութեան հետեւանքով առաջացած աղէտների հետեւանքով, եւ որոնք չեն հատել միջազգայնօրէն ճանաչուած պետական սահմանները»[4]: 1992ին Ադրբեջանի կողմից Արցախի եւ ՀՀ դէմ սանձազերծուած առաջին պատերազմի պատճառով նախկին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի, Շահումեանի շրջանի, Հիւսիսային Արցախի եւ ՀՀ շուրջ 161,000 մարդ յայտնուեց ներքին տեղահանուած անձի կարգավիճակում որոնցից իրենց բնակավայրեր չկարողացան վերադառնալ Շահումեանի շրջանի եւ Հիւսիսային Արցախի աւելի քան 100,000 հայ տեղաբնիկները[5]: Յետագայում նրանց մի մասը մեկնեց ՀՀ եւ այլուր:

Խոցելի այս երկու խմբերի անդամները արցախեան առաջին պատերազմից յետոյ բախուեցին ընկերային, տնտեսական, հոգեբանական, համարկման եւ այլ խնդիրների, որոնք յաղթահարելիս օգնում էր արցախեան առաջին պատերազմում յաղթանակած լինելու փաստը: 2018ի յեղափոխութիւնը ՀՀում իր որոշակի արձագանգն ունեցաւ թէ՛ ՀՀում եւ թէ՛ Արցախում, նաեւ՝ նշուած խոցելի խմբերի շրջանակներում, քանի որ նրանք եւս հաւատացած էին, որ տարիների ընթացքում նրանց չլուծուած խնդիրները, որոնցից առաջնահերթը բնակարանային խնդիրն էր, լուծում կը ստանան. յատկապէս դա ակնյայտ դրսեւորուեց 2020ի ընտրութիւնների ժամանակ:

Յեղափոխութիւն/քաղաքացիական ներքին զինեալ խռովութիւններ

Յեղափոխութիւնն ու քաղաքացիական ներքին զինեալ խռովութիւնները, առաջին հերթին, հասարակութեան անդամների վարքագծի որոշակի փոփոխութիւն են, ապա՝ նաեւ նրանց հոգեկանի ու գաղափարախօսութեան, համոզմունքների, բարոյականութեան փոփոխութիւն: Հենց այս լծակներն էլ օգտագործւում են յեղափոխութիւնների թէ ներքին խռովութիւնների ժամանակ, երբ ամբոխավարական կամ այլ միջոցներով օգտագործւում են մարդկանց զգացումները ի շահ յաղթանակների կամ անձնական շահերի: Ընկերային խոցելի խաւերն, ինչպիսիք են փախստականնե-

---

[4] "Guidelines on the Displacement of Persons", United Nations Office for the Coordination of Humanitarian Affairs, https://www.unocha.org/themes/internaldisplacement/resources :

[5] Elina Mkhitaryan, "The Legal Status of Refugees in Unrecognized States as an Example of the Republic of Nagorno-Karabakh (Artsakh)," Initernational Conferance «Europe and the Neighbouring Countries», October 13-14, 2022, *Cuadernos de Derecho Europeo*, 9:2023, էջ 255:

ը, տեղահանուած անձինք, կուլ են տալիս «խայծը», քանի որ իրենց ճակատագիրը խեղուած են համարում, ընկերային արդարութեան պակասի զգացողութիւն ունեն, յուսալով որ տրուող խոստումները կը յարգուեն եւ իրենց ընկերային հրատապ խնդիրները կ'արժանանան համապատասխան լուծումների:

Համաճարակ

Ճգնաժամի յանգեցնող աղէտ է համաճարակը, ուսումնասիրուող ժամանակաշրջանում՝ պսակաձեւ ժահրը (COVID-19), որ Արցախում բռնկուեց 2020ին[6]՝ վերջին պատերազմից առաջ եւ շարունակուեց պատերազմի ընթացքում: Համաճարակներն ու լուրջ հիւանդութիւնները փոխում են իրենց «զոհերի» յոյզերն ու զգացմունքները: Այս բոլոր հիւանդութիւնների պատճառած ընդհանուր բնութագիրը տառապանքն է, մահուան վախը, անկարողութեան, տկարութեան զգացումը: Համաճարակը փոխում է հիւանդի յուզական եւ զգացական կեանքը, ինչը պայմանաւորուած է ոչ միայն կենսաբանական բուն հիւանդութեան առանձնայատկութիւններով, այլեւ հիւանդի՝ ընկերային յարաբերութիւններում ընթացող մեծ փոփոխութեամբ, ով յանկարծ յայտնւում է մեկուսացման մէջ գրեթէ բոլոր սիրելիներից, հարազատներից, յաճախ նոյնիսկ իր ընտանիքի անդամներից: Վերյիշենք COVID-19ի ժամանակ բժշկական ցուցումները՝ «Մնացէք տանը, ինքնամեկուսացէք եւ հետեւէք ձեր ախտանշանների զարգացմանը»[7]: Հիւանդը մի տեսակ ընկերային դատարկութեան մէջ է ընկնում. մարդիկ, ում հետ հիւանդը կապուած է եղել բարեկամութեան եւ սիրոյ կապերով, աշխատանքով եւ ընդհանուր շահերով, այժմ փորձում են խուսափել նրանից: Ինք եւս – մեկնելով պատասխանատուութեան գիտակցութիւնից – խուսափում է շփուել իր միջավայրի հետ: Իսկ երբ այս ամէնը արտացոլւում է փախստականի կամ պատերազմի ժամանակ տարհանուած եւ տեղահանուած անձի վրայ, կարելի է պատկերացնել մեկուսացման խորը անդունդը, որի մէջ յայտնւում է անձը:

Արցախեան 44օրեայ պատերազմի ընթացքում հին եւ նոր ՆՏ անձինք յայտնուեցին բացարձակ նոր պայմաններում, թէկուզ եւ նոյն ազգութեան մարդկանց շրջապատում, երբ անհրաժեշտ է շփուել, կիսուել սեփական վշտով ու կորստի ցաւով, բայց պարտադրւում է մեկուսացում. տեղահանուած անձը զրկւում է հասարակ ապրումակցման հնարաւորութիւնից[8]: Փա-

---

[6] «Արցախում կորոնավիրուս է գրանցուել եւս 3 քաղաքացու մօտ. ընդհանուր դէպքերի թիւը 57 է. 11:11, 03.06.2020», https://www.artsakhpress.am/arm/news/127153/arcakhum-koronavirus-e-grancvel-evs-3-qaxaqacu-mot-yndhanur-depqeri-tivy-57-e.html մատչում՝ 11:11, 03.06.2020:

[7] World Health Organization, "Advice for the Public: Coronavirus Disease (COVID-19)", https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019/advice-for-public :

[8] Նոյն:

խստականների (ՀՀ, Ռուսիա) պարագայում մեկուսացումը կրկնակի կաղապարով է. 1988-92ին խոշոր արդիւնաբերական քաղաքաների ռուսախօս հայ բնակիչները կորցնում են իրենց առօրեայ կեանքն ու ամբողջ ունեցուածքը, գերեզմանները.. յայտնւում են պատերազմական թոհուբոհում, ապա եւ լեզուական-կենցաղային համարկման երկար գործընթացում: Ահա, 44օրեայ պատերազմից յետոյ իրադարձութիւնների նոյն շրջապտոյտը կրկնուեց նոր տեղահանուածների վրայ: Անձամբ դիտարկել ենք, վերջին իրադարձութիւնների ընթացքում, թէ ինչպէս՝ անկախ կենսաբանական գործօններից, միայն այդ ընկերահոգեբանական մէնակութիւնը բաւական է առաջացնելու խորը փոփոխութիւն փախստականի, տեղահանուած անձի գորովանքի եւ զգացմունքային կեանքում, ով դարձել է նաեւ համաճարակի զոհ:

Պատերազմ

Ճգնաժամային հերթական աղէտը պատերազմն է, որին 30 տարուայ ընթացքում արցախահայութիւնը առերեսուել է 3 անգամ (1992-94, 2016, 2020): Ի սկզբանէ պէտք է տարանջատել ամբողջ բնակչութիւնից այս երկու խմբերին՝ փախստականներին եւ տեղահանուած անձանց, ովքեր դեռ 1988ից անմիջականօրէն կանգնել էին մահուան վտանգի առաջ՝ յայտնուելով ադրբեջանական ցեղասպանական մեքենայի եռափուլ գործողութիւնների թիրախում[9]: Առերեսուելով թուրք, ազերի եւ վարձկան մարդասպանների վայրագութիւններին՝ նոր փախստականների եւ ՆՏ անձանց հոգեբանութեան մէջ կայ վախ՝ որպէս համատարած եւ գերակշռող զգացում: Լինելով ամենացաւոտ եւ ամենաուժեղ յոյզերից մէկը՝ վախը խորապէս փոխում է այս խմբերի զգացական, զգայական կեանքը եւ կործանում, ոչնչացնում է այն: Պատահական չէ, որ փախստականների եզրոյթի իրաւական ձեւակերպման դրոյթներից մէկը «հիմնաւոր երկիւղն է»[10]: Շատերը ենթարկւում են վախին. միւսները հակադրւում են նրան այնպիսի դիմադրող-հակաուժերի ճնշման ներքոյ, ինչպիսիք են պարտքի զգացումը, քաջութիւնը, ամօթը...: Բայց նոյնիսկ նրանք յայտնւում են վախի մուրճի եւ հակաուժերի սալի արանքում: Արցախում ապրող հայ փախստականների եւ ՆՏ անձանց պարագայում, մուրճի դերում՝ հետապնդման հիմնաւոր երկիւղն ու մաուան սպառնալիքն է, իսկ սալի դերում՝ երեխաներին փրկելու, կնոջը թուրքի բռնաբարութիւնից պաշտպանելու պարտքի զգացումը: Այս երկու հակազդութիւններն էլ բռնագաղթած, տեղահանուած հայ տղամարդկանց (եւ ոչ միայն) նետում են պատերազմի մէջ՝ գործնականում կիրառելու գոյութենա-

---

[9] Վահրամ Բալայեան, *Արցախի պատմութիւն*, Ամարաս հրատ., Երեւան, 2002, էջ 357:

[10] https://www.unhcr.org/ph/wp-content/uploads/sites/28/2017/03/3.1-1951-Convention-relating-to-the-status-of-refugees.pdf :

կան մղումները, որոնք նման էին 1915ի Վանի ինքնապաշտպանութեան, 1992ին արցախեան առաջին[11] եւ 2020ին 44օրեայ պատերազմներում:

Շրջափակուած, պաշարուած Արցախ. չորրորդ աղէտը

2018ի յեղափոխութիւն ՀՀում եւ խառնաշփոթ-անկայուն իրավիճակ, 2019-20ի համաճարակ (COVID 19), 2020ի 44օրեայ պատերազմ: Այս երեք իրադարձութիւններից յետոյ Արցախի բնակչութիւնն Ադրբեջանի իշխանութիւնների կողմից մշակուած յստակ բեմագրով մատնւում է շրջափակման եւ դրա հետեւանքով՝ սովի:

2020 Նոյեմբերի 10ի եռակողմ յայտարարութեան համաձայն Բերձորի (Լաչինի) միջանցքը (5 կմ լայնութեամբ) ապահովելու է Լեռնային Ղարաբաղի կապը Հայաստանի հետ եւ մնում է Ռուսաստանի Դաշնութեան խաղաղապահ զօրակազմի վերահսկողութեան ներքոյ[12]: Յայտարարութեամբ նախատեսւում էր նաեւ կողմերի միջեւ համաձայնեցմամբ առաջիկայ երեք տարիների ընթացքում սահմանել «Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ կապն ապահովող Լաչինի միջանցքով նոր երթուղու կառուցման ծրագիրը՝ այդ երթուղու պահպանութեան նպատակով ռուսական խաղաղապահ զօրակազմի յետագայ վերատեղակայմամբ»[13]: Նոր երթուղու կառուցման ոչ միայն ծրագիրը, այլեւ հենց ճանապարհը կառուցուեց ու յանձնուեց գերաճապարութեամբ՝ յայտարարութեան ստորագրման 2 տարին չլրացած. սա իհարկէ յուշում էր հակառակորդի օր առաջ Բերձորին տիրանալու եւ դրանից բխող յետագայ քայլերի մասին: Պէտք չէր գուշակ լինել՝ կանխատեսելու Ադրբեջանի յետագայ անելիքը. «*Եթէ Օգոստոսի 25ին Բերձորը եւ Աղաւնոն յանձնուեն Ադրբեջանին, ապա Արցախը կը շրջափակուի…Այդ կեանքի ճանապարհը փակուելու է հենց մեր ձեռքով: Մենք ունենալու ենք զոհեր…*»[14]:

Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման մտադրութիւնն ու նպատակն ակնյայտ էր, «գործը» մնում էր ձեւաչափի ընտրութեանն ու թատե-

---

[11] Տոկոսային յարաբերակցութեան մէջ արցախեան առաջին պատերազմում զոհուած փախստականների թիւը հաւասար է զոհուած բնիկ արցախցիների թուին (*ԼՂՀ ազգային-ազատագրական պայքար. 1988-2009, փառքի յուշամատեան*, կազմ.՝ Գ. Առստամեան, Ստեթանակերտ, 2009):

[12] Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-министра Республики Армения у Президента Российской Федерации, пункт 6, 09.11.2020г. (Հայաստանի Հանրապետութեան վարչապետի, Ադրբեջանի Հանրապետութեան նախագահի եւ Ռուսաստանի Դաշնութեան նախագահի յայտարարութիւնը, կէտ 6, 09.11.2020), էջ 1, https://www.primeminister.am/u_files/file/Haytararutyunner/Haytararutyun-.pdf :

[13] Նոյն:

[14] Ռաֆֆի Յովհաննիսեան, «ՀՀ նախկին ԱԳ նախկին ԱԳ նախարար, ճեպազրոյց», 09.08.2022թ., https://news.am/arm/news/715441.html :

ական մշակմանը: 2022 Դեկտեմբերի 12ին, ժամը 10:30ի սահմաններում բնական մորթու վերարկուներով «բնապահպանները» փակեցին Ստեփանակերտից Երեւան տանող միակ մայրուղին Շուշիի հատուածում՝ իբր պահանջելով դադարեցնել Արցախի Մարտակերտի շրջանում այդ պահին գործող միակ հանքի շահագործումը: Սա այն դէպքում, երբ ամբողջութեամբ Ալիեւների վերահսկողութեան տակ գտնուող եւ մինչ օրս գործող Ադրբեջանի Դաշքեսանի եւ Գեդաբէկի հանքարդիւնաբերութիւնը բանում է անխափան եւ որեւէ «բնապահպան» չի բողոքել դրա դէմ: Կրկնենք, որ Գորիս-Ստեփանակերտ մայրուղին 2020 Նոյեմբերի 9ի Եռակողմ յայտարարութեան համաձայն, անցնում է Բերձորի (Լաչինի) միջանցքով՝ կապելով Արցախը (Լեռնային Ղարաբաղ) Հայաստանի եւ արտաքին աշխարհի հետ: Հարկ է նշել նաեւ, որ բնապահպան ներկայացող անձինք բազմաթիւ ապացուցուած փաստերով սերտօրէն փոխկապակցուած էին ադրբեջանական իշխանութիւնների հետ կամ էլ հանդիսանում ադրբեջանական յատուկ ծառայութիւնների գործող կամ նախկին աշխատակիցներ[15]: «Բնութեան համար պայքարի» իրական պատճառն անթաքոյց եւ բացայայտ ներկայացւում է ադրբեջանական հանրային խօսափողերով. ադրբեջանցի քաղաքագէտ Շուշաթ Ահմեդզադէն թուիթըրի իր էջում հենց Դեկտեմբերի 12ին գրառում կատարեց. «*Միամտութիւն կը լինի կարծել, որ այն ինչ տեղի է ունեցել, պայմանաւորուած է բնապահպանական «մտահոգութիւններով»: Օգտուելով Ուկրայնայում մարտավարական լուրջ պարտութիւններ կրած Ռուսաստանի իրավիճակից՝ Ադրբեջանը փորձում է փոխզիջումներ կորզել՝ ամէն օր բարձրացնելով "խաղադրոյքը"*»[16]:

2023 Ապրիլի 23ին Ադրբեջանը յայտարարում է Գորիս-Ստեփանակերտ ճանապարհին՝ Հակարի գետի կամրջի վրայ ադրբեջանական անօրինական հսկիչ անցագրային կէտ տեղադրելու մասին: Ապրիլի 28ին, երբ Ադրբեջանն աւարտում է հսկիչ անցագրային կէտի կառուցումն ու կահաւորումը, ադրբեջանական այսպէս կոչուած «բնապահպան գործիչները» յայտարարեցին, որ հեռանում են ճանապարհի արգելափակուած հատուածից, իսկ նրանց փոխարինելու են գալիս ադրբեջանական ոստիկանութեան եւ այլ ծառայութիւնների ներկայացուցիչներ: Այս զարգացումների հետեւանքով 2023 Ապրիլի 23ից փաստացի Ադրբեջանի կողմից պետական ծառայութիւնների ներգրաւմամբ արգելափակուած է Գորիս-Ստեփանակերտ

---

[15] "The Azerbaijani Government's 'Eco-activist' Agents who Blockaded the Only Road of Life Connecting Artsakh to Armenia and the Outside World", Center for Law and Justice "Tatoyan" Foundation, Human Rights Ombudsman of Artsakh, https://tatoyanfoundation.org/wpcontent/uploads/2023/02/ECO_ACTIVISTS_22,02.2023V2.pdf?fbclid=IwAR3CUadchpJxZPX51cozPuZyGoVEaP1JeNn1dRbZDigq1h0JQgs8spUNaL4 :

[16] Shujaat Ahmazada, @S_Ahmazada, 2:28 PM, 12 dec. 2022, https://twitter.com/S_Ahmadzada/status/1602248931769044992 :

ճանապարհը երկու հատուածում՝ Շուշիի հարեւանութեամբ եւ Հակարի կամրջի մօտ: Ադրբեջանի կողմից անօրինական անցակէտի տեղադրման հետեւանքով կրկնակի շրջափակման մէջ են յայտնուել Արցախի Հանրապետութեան Շուշիի շրջանի Եղցահող, Հին շէն, Մեծ շէն եւ Լիսագոր համայնքները:

ՆԵՐԿԱՅ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Դեկտեմբեր 2022ից, ութ ամիս շարունակ Ադրբեջանի կողմից ֆիզիքապէս խոչընդոտւում է Արցախի միակ կեանքի ճանապարհի գործունէութիւնը, Արցախի 120,000 բնակչութիւնը, ներառեալ աւելի քան 30,000 երեխաներ, թողնուել են լիակատար մեկուսացման մէջ՝ յանգեցնելով մարդու անհատական եւ հաւաքական իրաւունքների զանգուածային խախտումների, ինչպէս նաեւ գոյութենական եւ անվտանգութեան բազմակողմ սպառնալիքների: Ամբողջական շրջափակմանը զուգահեռ Ադրբեջանը միտումնաւոր խաթարում է Արցախի կենսական նշանակութեան ենթակառուցուածքների՝ գազամատակարարման, էլեկտրամատակարարման եւ կապի ու հաղորդակցութեան բնականոն աշխատանքը՝ նպատակ ունենալով սրել ծանր մարդասիրական ճգնաժամը[17]: Այնինչ, հենց Եռակողմ յայտարարութեամբ «*Ադրբեջանի Հանրապետութիւնը երաշխաւորում է Լաչինի միջանցքով քաղաքացիների, փոխադրամիջոցների եւ բեռների՝ երկու ուղղութիւններով տեղաշարժի անվտանգութիւնը*»[18]:

Շրջափակման հետեւանքները պատկերացնելու համար ներկայացնենք միքանի վիճակագրական ցուցանիշեր[19]:

Մինչ շրջափակումը Ստեփանակերտ-Գորիս մայրուղով երկկողմանիօրէն անցնում էր օրական միջինը 2450 մարդ, սովորական պայմաններում 8 ամսուայ ընթացքում պէտք է մարդկանց տեղաշարժը լինէր շուրջ 595,350 մուտք եւ ելք: Շրջափակման ընթացքում միայն Կարմիր խաչի միջազգային կոմիտէի եւ ռուս խաղաղապահների միջոցով երկկողմանիօրէն տեղափոխուել է ընդամէնը 2500 մարդ (բաժանուած ընտանիքների անդամներ եւ հիւանդներ):

---

[17] Interim Report on the Violations of Human Rights of Artsakh People as A Result of the Deliberate Disruption of Critical Infrastructure in the Midst of The Blockade of Artsakh by Azerbaijan Since December 12, 2022," Human Rights Ombudsman of Artsakh, January 23, 2023, https://artsakhombuds.am/en/document/987 :

[18] Տե՛ս՝ Հայաստանի Հանրապետութեան վարչապետի, Ադրբեջանի Հանրապետութեան նախագահի եւ Ռուսաստանի Դաշնութեան նախագահի յայտարարութիւնը, կէտ 6, 2րդ պարբերութիւն, https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/ :

[19] ***Ծխ***.- Հասկնալի է, այս տուեալները կ'արտացոլեն մինչեւ տեղեկագիր-հաղորդումին պատրաստման թուականի իրավիճակի կարգ մը երեսակներ:

Շրջափակման հետեւանքով իրենց տներ չեն կարողացել վերադառնալ ընդհանուր առմամբ շուրջ 3900 անձինք, ներառեալ՝ 570 երեխայ, Արցախում եւ Հայաստանում ժամանակաւորապէս աշխատող անձինք, ՀՀում սովորող ուսանողները[20]:

Շրջափակման 8 ամիսների ընթացքում մահուան եւ հիւանդութիւնների դէպքերի աճ է գրանցուել: Այսպէս՝ ընդհանուր մահացութիւնների շարքում. արեան շրջանառութեան համակարգի հիւանդութիւններից արձանագրուել է մահացութեան աճ՝ աւելի քան 2 անգամ, ներառեալ՝ սուր եւ քրոնիկ սրտային անբաւարարութիւնից մահերի աճ՝ 66%ով, սրտամկանի սուր կաթուածից՝ 20,8%ով, ուղեղի կաթուածից՝ 8,8%ով, չարորակ նորագոյացութիւններից մահերի քանակը աճել է 15,9%ով: Արձանագրուել է նաեւ գլխուղեղի արեան շրջանառութեան սուր խանգարման (ուղեղի կաթուած) եւ սրտամկանի սուր կաթուածի նոր դէպքերի աճ՝ համապատասխանաբար 26%ով եւ 9,7%ով, չարորակ նորագոյացութիւնների նոր յայտնաբերուած դէպքերի աճ՝ 24,3%ով, բժիշկների հսկողութեան տակ գտնուող յղի կանանց շրջանում սակաւարիւնութեան մակարդակը հասել է մօտ 90%ի՝ պայմանաւորուած ոչ լիարժէք սննդով եւ համապատասխան դեղամիջոցների սղութեամբ կամ բացակայութեամբ[21]: Վերարտադրողական առողջութեան խնդիրներ ունեցող քաղաքացիները, որպէս կանոն, համապատասխան բուժօգնութիւն ստանում էին ՀՀ բուժհաստատութիւններում, իսկ այժմ շուրջ 215 զոյգեր զրկուած են համապատասխան բուժօգնութիւնից, այսինքն՝ առնուազն 200 հայ չծնուեց: Նշուած ցուցանիշերի աճը պայմանաւորուած է Արցախի շրջափակման, ապա եւ լիակատար պաշարման հետեւանքով առաջացած առողջապահական լրջագոյն խնդիրներով՝ դեղորայքի ու բժշկական պարագաների սղութեամբ կամ բացակայութեամբ, բնակչութեան թերսնմամբ, հոգեպրկումներով, ծրագրային վիրահատութիւնների ու հետազօտութիւնների դադարեցմամբ, ՀՀում եւ արտերկրում բուժօգնութիւն ստանալու հնարաւորութիւնների խիստ սահմանափակմամբ:

Արցախ, մինչեւ շրջափակումը, մարդկանց կենսական կարիքների բաւարարման համար ներկրւում էր օրական շուրջ 400 տոննա ապրանք. 8 ամսուայ ընթացքում պէտք է ներկրուէր շուրջ 100,000 տոննա ապրանք, բայց Կարմիր խաչի եւ ռուս խաղաղապահ առաքելութեան միջոցով ցարդ Արցախ է ներկրուել 5574 տոննա սնունդ ու դեղորայք: Նշենք, որ Յունիսի 15ից Ադրբեջանն արգելել է ռուս խաղաղապահների ցամաքային տեղա-

---

[20] «Զեկոյց Ադրբեջանի կողմից Արցախի (Լեռնային Ղարաբաղի) շրջափակման հետեւանքով մարդու անհատական եւ հաւաքական իրաւունքների խախտումների մասին. վեց ամիս» (artsakhombuds.am), 12 Յունիս 2023:

[21] «Արցախի Հանրապետութեան առողջապահութեան նախարարութեան ցուցանիշները շրջափակման ժամանակաշրջանում», https://m.facebook.com/story.php?story_fbid=676048751227729&id=100064678300433&mibextid=qC1gEa :

շարժը, ինչը յանգեցրել է խաղաղապահների կողմից Արցախի բնակչութեան համար մարդասիրական բեռների առանց այդ էլ սահմանափակ ծաալների, Կարմիր խաչի միջազգային կոմիտէի կողմից ներկրուող ալիւրի ու դեղորայքի ներմուծման դադարեցմանը:

Պարենային անվտանգութեան մակարդակը կտրուկ նուազել է 2020ին գիւղատնտեսական բերրի հողերի գերակշիռ մասը Ադրբեջանի կողմից բռնազաւթուելու հետեւանքով: Այդ պատճառով շրջափակումից առաջ Արցախում վաճառուող սննդի շուրջ 90%ը ստիպուած ներկրւում էր ՀՀից եւ այլ երկրներից, ինչի պատճառով էլ շրջափակումը մեծապէս ազդել է մատակարարուող սննդի քանակի ու բազմազանութեան վրայ: Միջազգային իրաւունքի տեսանկիւնից շրջափակման հետեւանքով բացարձակ խնդրի են վերածուել ՄԱԿի կողմից առանձնացուած՝ պարենի իրաւունքի բոլոր չորս բաղադրատարրերը՝ հասանելիութիւն, մատչելիութիւն, համապատասխանելիութիւն եւ կայունութիւն[22]: Հաշուի առնելով սննդամթերքի սղութիւնը եւ եղած պետական պաշարները համաչափ բաշխելու անհրաժեշտութիւնը՝ Արցախում 2023 Յունուարի 20ից մտցուել է կտրօնային համակարգ, որի շրջանակներում սահմանափակ ծաւալով վաճառւում էր տասը ապրանքատեսակ՝ մակարոնեղէն, հնդկաձաւար, բրինձ, շաքարաւազ, ձէթ, միրգ, բանջարեղէն, ձու, ոչ-պարենային՝ լուացքի փոշի եւ հեղուկ վառելիք: Սակայն Յունիսի 15ից յետոյ, երբ Ադրբեջանը բացարձակ արգելափակեց ռուս խաղաղապահների եւ Կարմիր խաչի հետ մարդասիրական բեռների (սնունդ եւ դեղորայք) ներմուծումը, իրավիճակը կտրուկ եւ անդառնալի վատթարացաւ, վաճառակէտերում սպառուեցին սննդի, առողջաբանական պարագաների պաշարները, հնարաւոր է գնել միայն Արցախում աճեցուած սահմանափակ քանակի բանջարեղէնը՝ հիմնականում գետնախնձոր[23] եւ լոբի: Ներկրուած ալիւրի ամբողջական սպառման հետեւանքով արցախցիները սկսել են սպառել նոր հնձուող ցորենից ալիւրը, որի շատ քիչ քանակութիւնը քաղաքային բնակավայրերում մեծ հերթերի պատճառ է դառնում. մարդիկ ամբողջ գիշեր հերթում են անցկացնում, երբեմն էլ ձեռնունայն՝ առանց հաց, վերադառնում՝ հոսանքի հովհարային անջատումներով պայմանաւորուած հացի փռերի աշխատանքի դադարեցման պատճառով[24]:

---

[22] "The Right to Adequate Food", Fact Sheet No. 34, էջ 2-3, https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Publications/FactSheet34en.pdf :

[23] Ի. դարասկզբին գերմանացի ընկերային առողջաբան, Ալֆրէդ Գրոտիանը իր հետազօտութիւններից մէկում նշել է, որ ինչքան սուղ են հասարակութեան, ընտանիքի հնարաւորութիւնները, այնքան սննդակարգում աւելանում է գետնախնձորը:

[24] Մեր տուեալները քաղել ենք Արցախի Հանրապետութեան տեղահանուածների եւ փախստականների խնդրով դաշտային հետազօտութեան խմբերից մեզ հասած նորագոյն տեղեկագրերից:

Պարենային ճգնաժամը տանում է դէպի սով…Պէտք է տարբերակել ամբողջական, ֆիզիոլոգիական քաղցը, երբ սպառուած սննդի քանակն ու որակը ցածր է մարմնի կարիքները բաւարարելու համար անհրաժեշտ ֆիզիոլոգիական նուազագոյնից, եւ մասնակի կամ յարաբերական ընկերահոգեբանական սովը, որը կապուած է որոշակի սնունդ ուտելու մեր սովորութիւնների հետ: Այս իրավիճակը արտացոլենք փախստականների եւ տեղահանուած անձանց խմբերին: Եթէ սովորական մարդու կեանքում ընկերահոգեբանական քաղցը ինչ-որ առանձնայատուկ համեղ ուտեստի բուռն ցանկութիւնն է՝ որպէս «ախորժակի» դրսեւորում, ապա փախստականների եւ տեղահանուած անձանց դէպքում այն իրենց հայրենի, այժմ գրաւուած բնակավայրի ուտելիքի, ջրի անյագուրդ քաղցն է, ինչը տեւական ժամանակ խտանալով վերածւում է կարօտախտի: Դրա դրսեւորումները հանդիպում ենք ժողովրդական բանահիւսութեան մէջ՝ *«Վէրքիս դեղ ու սպեղանին, Ա՛խ, իմ հայրենիքիս ջուրը, Քաղցր ես, քան նռան գինին, Ա՛խ, իմ հայրենիքիս ջուրը»*[25]*:* Սակայն շրջափակման ընթացքում ընկերահոգեբանական քաղցը վերածւում է առաւել դժուար լուծելի կացութեան:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

Իր վրայ կրելով վերոյիշեալ չորս իրադարձութիւնների ամբողջ ծանրութիւնը՝ արցախահայութիւնը կանգնած է ոչնչացմանն ուղղուած Ադրբեջանի ծրագրուած լայնածաւալ եւ համակարգուած քաղաքականութեան առաջ:

Արցախի շրջափակումը ուղղակի շարունակութիւնն է 2020ին Ադրբեջանի կողմից Թուրքիայի եւ Մերձաւոր Արեւելքից ահաբեկչական կազմակերպութիւնների անմիջական մասնակցութեամբ սանձազերծուած ռազմական յարձակման: Ադրբեջանը հետեւողականօրէն վարում է Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքն ուժի միջոցով ճնշելու քաղաքականութիւն՝ ուղեկցելով իր գործողութիւններն ուժի կիրառմամբ եւ մարդու իրաւունքների զանգուածային խախտումներով[26]: Ադրբեջանի կողմից շրջափակումը եւ մարդասիրական մուտքի արգելքը յատկապէս ազդել են ընկերային խոցելի խմբերի վրայ, ինչպիսիք են փախստականները եւ ՆՏ անձինք: 1988-92ին բռնագաղթած եւ Արցախում ապաստանած փախստականների աւելի քան 15%ը հարկադիր տեղահանուել են 2020ի 44օրեայ պատերազմի ժամանակ՝ համալրելով 40,000 տեղահանուածների շարքերը, որոնցից շուրջ 15,000ը շրջափակման մէջ են ապրում Արցախում: Շրջափակման ընթացքում դադարեցուել է հարկադիր վերաբնակների հա-

---

[25] «Հայրենիքիս ջուրը», երգ, խօսք եւ երաժշտութիւն՝ Ջիւանի (Սերովբէ (Սերոբ) Ստեփանի Բենկոյեան (Լեւոնեան)), http://horovel.org/lalayan/horovel.nsf/b6faaed24a719395c12580c50056ed9d/2ac871c8627a6defc1258460007b607c!OpenDocument :

[26] «Արցախի նախագահի հրատապ ուղերձը միջազգային հանրութեան դերակատարներին, 08.08.2023թ.», http://president.nkr.am/am/news/lawsOrders/5810/ :

մար շուրջ 4000 բնակարանների շինարարութիւնը, քանի որ արդէն շուրջ 8 ամիս անհրաժեշտ շինանիւթ չի մատակարարւում Արցախ:

Այսպիսով, ամփոփելով վերջին շրջանում իրադարձութիւնների զարգացումները, անթաքոյց է դառնում Ադրբեջանի յստակ ռազմավարութիւնը՝ կեանքի հետ անհամադրելի պայմանների ստեղծմամբ իրականացնել Արցախի բնիկ ազգաբնակչութեան էթնիկ զտում՝ «չկան հայեր, չկայ հայկական հարց» աբդուլհամիդեան, թալէաթեան քաղաքականութեան աւանդներով:

THE CRITICAL CONDITIONS OF THE INDIGENOUS POPULATION OF ARTSAKH (AN OBSERVATION ON REFUGEE AND INTERNALLY DISPLACED GROUPS)

(Summary)

ELINA MEKHITARYAN
mkhitaryan.elina.m@gmail.com

The article is a firsthand report on the current humanitarian crisis in Artsakh, which has been under an illegal blockade by the Azeri state for over 240 days, since December 2022.

The author analyses the impact of the four most destructive catastrophes of humankind, namely war, revolution, famine and epidemic, on the native population of Artsakh and concludes that Azeri state policy is not intended to provide safe and secure conditions for the population of Artsakh, which is a requisite of human rights and minority rights. On the contrary, in a blatant violation of the tripartite declaration of November 9, 2020, Azerbaijan intends to carry out ethnic cleansing in the self-proclaimed Republic of Artsakh, a repetition of the old Young Turk anti-Armenian policy of resolving the Armenian Cause: “No Armenians, no cause.”